



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ 22 ՄԱՐՏ 1875

ԹԻԻ 1010

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գերմանիոյ մեծ և փոքրիկ կառավարութիւններն ամենին չդադարեցան ի հաշիւելոյ այն ամեն եկեղեցականքն, որ յամառութեամբ կը մերժեն հնազանդիլ նորահաստատ եկեղեցական օրինաց։ Յանցելուն Պապի մեծ դքսութեան մէջ Յրիպուրիկ եպիսկոպոսն, որ օրինազանցութեամբ կը վարէր զպաշտօն իւր, 70 տարեան բանգարկութեան և սուգանայ դատաւարութեամբ։ Նմանապէս Մոսկովէի քաղաքէն կողմէն թէ Պրիկլամ եպիսկոպոսն բռնութեամբ և ի բանտ դրուեալ է։

Ինչպէս կը տեսնուի, Գերմանիոյ կայսրութիւնն որոշած է ճշդիւ ի գործնական առնչմանս դրապէս հաստատեալ եկեղեցական օրէնքը։ Դրանք միւս կողմանէ Ս. Պապը կը շարունակէ կոնգրակներ հանել։ Որով կը յորդորէր զկաթոլիկ կղերն Գերմանիոյ դէմ դնել աշխարհական իշխանութեան։

Իտալական և գերմանական լրագիրք կը հրապարակեն թէ Գերմանիոյ կայսրական կառավարութեան կողմանէ գրաւոր յայտարարութիւններ եղեր են ի հռոմ, յառաջ բերելով թէ Պապն չարաչար կը դործածէ զիրաւունքն ազատ տարանի, զոր շնորհած է նմա իտալիայ կառավարութիւնն։ Չանազան են կարծիքն յիշեալ պաշտօնական յայտարարութեանց իմաստին վերայ։ Սակայն հաստատագրին կարծիքն այն է թէ իտալիոյ թող տրուեի քննարկութիւնն միջոց, զորս ի գործ պիտի դնէ արգելելու համար զՊապն ի յորդորելոյ յանհնազանդութիւն օրինաց զհպատակսն կառավարութեան միոյ, որ բարեկամ է իտալիոյ տէրութեան։ Կը հաւատան թէ իտալական կառավարութիւնն խոստա-

ցեր է գործել համեմատ օրինաւոր դիտողութեանց Գերմանիոյ։

Պապիոյ գործքերն յաջող դարձուածք մի ընդունելէ խիստ հեռի են տակաւին։ Տէրութեան գործնական փրճակն այն աստիճան տիրէ, որ Ալֆրէտ թագաւորն իւր պալատին ծախքն հոգալու համար պարտաւորեալ է, կ'ըսեն, ի մօրէ իւրմէ փոխ գործառնելու։ Կը յաւելուն նաեւ թէ Նորին Վերահաւանութիւնն այն աստիճան յուսահատեալ է իւր կացութենէն որ կը խորհի հրաժարիլ ի թագաւորական անժողոջն ի սպասարկութեան զքրին, որ իւր մօրաքրոն լծակիցն է։

Այս վերջին լուրն թէ և ստուգութեան կարօտ է, բայց կ'ապացուցանէ թէ Պապիոյ գործքերն խիստ ձախորդ կացութեան մէջ կը գտնուին և կարողանանք օր ըստ օրէ զօրանալու և յառաջդիմելու վերայ են։ Ըսել է որ համազգային պատերազմը տակաւին երկար ժամանակ պիտի տևէ Պապիոյ մէջ։

Աւստրիոյ օգոս. կայսրն Ալֆրէտ Էլին բոտ ֆրանկաց, պոսիքն հինգշաբթի օրը մեկնած պիտի լինի վեննայէն իտալիա երթալու համար յայցելութիւն վիթթօր—լմանուել թագաւորն։ Աւստրիոյ կոմսն և քանի մը գլխաւոր պաշտօնատարք ուղեկից պիտի լինին Աւստրոհունգարիոյ վերահաւանին։ Որ երկու օր ի Թրետտ մնալէ ետեւ, երկաթուղիով ի վենետիկ պիտի երթայ։ Ուր ներկայ պիտի գտնուի իտալիոյ թագաւորն ընկերութեամբ արքայազուն Հիւմպերթ իշխանին ու Մինիէթի և վիսթոնի—վենետիկ գլխաւոր նախարարաց իւրոց։

Գաղղիոյ գործքերը հանդարտ վիճակի մէջ կը գտնուին և ընդգիծամարտ կուսակցութիւնքն

առ այժմ քաջաւած են ի գործելոյ դռնէ յայտնի կերպիւ։ Կը հաւատան թէ Մարք—Մահօն նախագահին կառավարութիւնն դիտաւորութեան ունի 1200 միլիոն ֆրանքի փոխառութիւն մի ընել, վճարելու համար Պանքային ռենկցած պարտքը և Անգլիոն Մորկան փոխառութիւնը։

Ալգային ժողովոյն մէջ հարցում լինելով կառավարութեան անդամոց ի մասին լուծման ժողովոյն, պաշտօնեայք պատասխանեցին յառաջ բերելով զճարգիրսն օրինաց զորս ժողովն պարտի հաստատել յառաջդիմելու, և յաւելցուցին թէ ինքն միայն այսինքն ժողովն, կրնայ որոշել զժամանակն լուծման։ Այսու ամենայնիւ կառավարութիւնն յայտնեց թէ հարկաւոր չէ կանխահաւ կերպիւ յարուցանել զընտրական յուզումն։

Եգիպտոսի դատաւարանական բարեկարգութեան խնդրոյն համար հաստատեալ մասնաժողովն միաբան հաւանութեամբ յանձնեց իւր նախագահին՝ որ արտաքին գործոց պաշտօնեայ մօսիւ Տէքալին հետ խօսակցելով կարգադրէ ըզգումարումն ի ժողով Եգիպտոսի բնակիչ գաղղիացւոց, իմանալու համար նոցա կարծիքն ի մասին դատաւարանական բարեկարգութեան։

Կալէսի իշխանն, որ Անգլիոյ թագուհոյն դահաժառանգ որդին է, ճանապարհորդութիւն մը պիտի ընէ, կ'ըսեն, ի Հնդկաստան յայցելութիւն միջնաւոր անդիւցի հպատակաց։

Վեննայի Լ. Ն. Վել Բէլ Լէպը օրագրոյն գրածին նայելով, ի մօտ աւելըսնոր տեսակցութիւն մի տեղի պիտի ունենայ ի մէջ կայսերաց Գերմանիոյ, Ռուսիոյ և Աւստրոհունգարիոյ։ Այս լուրն թէ և ստուգութեան կարօտ է, բայց յոյժ հաւանական կ'երևի կենցաղագէտ շանձանց։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԾԱՆՈԹԱՅԻՆ

Ի յիշատար կենսագրութեան սրբազան Հայրապետի Ներսիսի Ե. վեհափառ և ազգասեր Կարողիկոսի ամենայն Հայոց։

(Զարուհակութիւն։ ՏՅԱ ՔԻՆ 1009)

Արդեօք յիշուի այսպիսի յոյս գտնէ առ ժամ մի ռենկցաւ Ներսէս վարդապետն, և միաբերելով իւր բարեկամաց Գանիէ և Մանուէլի արքունի ի սրտէ կըցանկանայ Յովսէփայ ողջամբ յԱթոռ ժամանելն, զի ի որոյ Ներսէս վարդապետն պարզ հասկանալոց էր որ այնուհետեւ չպիտի ունենայ այն բացարձակ ազատութիւնն որ ինչ ունէր Ղուկաս կաթողիկոսի ժամանակն, թէ պատրաստութեամբ էր իւր մտքին մէջ համբերութեամբ և քաջութեամբ կանգնել Յովսէփայ անդ իման յառաջում տեսութեան, ինչպէս զոս յառաջին ատենին, որ երբ տեսնէ թէ իր կամքն է իւր առիւծային զօրութեամբ որան գետնէ գետին զաքնել, յուսիկ թողուլ կրկէն, և հետեանայ Մանուէլի նման Գանիէի մօտ յԱռաջնորդութիւնն Կարողիկոսի, և այն տեղէն սկսիլ նոր պատերազմ Յովսէփայ նոր Հայրապետութեան դէմ։ Կամ թէ որովհետեւ իշխանի միտքն արդէն տալիս էր նորան իշխանի միտքն, մանաւանդ Յովսէփայ կոնգրակներ զօրութեամբ, նոցա վտանգաւոր իշխանի մէջ ապստամբից միաբանութիւն մի կազմել, և Յովսէփայն այս ճանապարհաւ սանձահարել։

Քաջ գիտէր Ներսէս վարդապետն որ Յովսէփ վաղկասու նման գծուծ գիւղական ոմն չէր։ Ըսել էր ճանաչել Յովսէփայ գիւղաբնակ, զայրացիոտ, սեղ և գիրդ բնաւորութիւնն։ Երբ նորա պատկերն իւր երեւակայութեան մէջ նկարագրում էր, իսկայն իւր մտաց արձագանքի մէջ հետեւէր նորա անկող և քանակէի ձայնն, իւր մտաց հայերէս մէջ կըրպացուցանում էր նորա փառացի տեսին, նորա հակադաս քայլերն, նորա մեծ մեծ ձեռներն, և նորա երկայն բազուկներն։ Կրտսէի քաջութեամբ էր նորան Հայրապետութեան զգեստաց մէջ որպէս մի երկնաքաղաքացի, իսկ առ տնին իւր կրօնաւորական հաղուստի մէջ ինչպէս մէկ օսմանեան անընկէց փայտ, կամ ինչպէս մի Պարսիկ անկողար խան։

Այս ահագին պատկերազարդութեան մէջ յանկարծ տեսնում էր զՅովսէփ այլ կերպով, որ երբ իւր սիրտն իսկանութեամբ տալէն պարզելով ճանաչելին, կ'սկսէր երկին հանգչել լուր, երեսն և սուսուն պատասաւ իմանալ մեղայտել, ի մօտիկ անկողիլ, ամենայն զոհ բերել ի սեղան, ամենայն հնարիւք ջանագիր լինել հաշուութիւն ինչ ինչ և իւր յանձնքն բազմապատիկ հոտուցութեամբ լուսնայ։

Այսպէս պատկերն իտալա փոխում էր։ Հայրապետիցն պիտի յիշատանայ զնա ճանաչում մի յոյս տուր։ Երբեք գիտար էր ուսանայ իտալա պատարակց ինչ Յանաշեցի շան ճրագի առջին կէն ու հո ձեռնալ, հնազանդիլ հոգատակիլ և ծոռ պատկեր պատկեր և յարգութիւն յոյս տուր։ Ուր մտաց տուր։ Աւետարանի վարդապետութեան նախարհեցալ յանելով զանձն բարձրանալն։ Ուր մտաց հեղ և խանարճ Յիսուսի փրկարար օրինակն, և նորա քաղցր լծոյ և փոք-

րոգի բեռնն յանձնառութիւնն։ Երբ վարագոյրն վերանայ, սքողեալ առաւելայքն կ'երևին իւրեանց բնիկ կերպարանք։

Այս ևս ոչինչ էր, որովհետեւ Ներսէս վարդապետն յառաջին տիոց պատանեկութեան սովոր էր ծառայել կաթողիկոսին, ուրեմն կարող էր ծառայել և Յովսէփին։ Բայց այլ էր կաթողիկոսին ծառայել, այլ էր կաթողիկոսի սիրելեաց ծառայել։ Ղուկաս կաթողիկոսի և Ներսէս վարդապետի մէջ չկայր երրորդ ոք։ Ներսէսն էր Ղուկաս կաթողիկոսի թէ որդին, թէ հարազատ ծառայն, թէ նորա ամենայն անխաղաղութեանց ճիշդ խելամտողն և կատարողապետն, նորա ամենայն հոգեկան բաղձանաց գուշակողն, թարգմանն և տնօրինողն։ Ներսէս վարդապետն միայն կայր բնակուած ի սրտի Ղուկաս կաթողիկոսի, և Ղուկաս կաթողիկոսն անդրադարձ բազմեալ կայր ի հոգեւ Ներսէս վարդապետի մի հոգի էր նոցա յերկու մարմինն բնակեալ։

Յովսէփ նայնպէս ունէր իւր Գրիգոր վարդապետն, զոր թողել էր յԱւստրալիան, որ իւր ծանրաբեռն ճոխութիւնն բերէ։ Չկայր այլ ոք, որում կարող լինէր Յովսէփ հաւատալ իւր այնքան ամաց իրազմաց անխաղաղ Հայոց ազգի քրտնաց պտուղն։ Լուր կայր որ Գրիգոր արդէն մօտ է Կովկասու լեռանց ի Մոզդուկ։ Գրիգոր պիտի հասնէր, որ կաթողիկոսի օծութեան հանգիստն համար հանգ երձապետութեամբ հանդիսադէսն նորա հանգ երձապետութեամբ հանդիսադէսն հոգեկան զգեստայ։ Ներսէս պիտի մնայր յանկան ուրեք քնայայ։ Ներսէս պիտի չմնայ հնար ինչ։ Եթէ Գրիգոր չլինէր Յովսէփի և Ներսէսի մէջ անջրպետ, Ներսէս կարող էր յուսալ Յովսէփայ տուլ ևս իւր գործունէութեան տեղ, և ասպարէզ գտանել։ Հարկ էր միայն սպասել

ԱԶԳԱՅԻՆ

Կ. Պօլսոյ փողոց լրագրոյն Մարտի 8 թուոյն
մէջ յետագայ մահագոյծն կ'ընթերցանուի:

Հայ եկեղեցեկանաց Երկրագոյններէն մին՝ Տ. Թագէտոս Ս. Արքեպիսկոպոս՝ որ կաթողիկոսի հիւանդութեամբ անկողնոյ կը ծառայէր, այս գիշեր հանգեաւ ի Տէր ի Պալատ, ուր վերջին ժամանակներս քարոզչութեան պաշտօն կը վարէր: Թագէտոս Սրբազան երկար ժամանակ Պօլսոյ պատրիարքական փոխանորդութեան պաշտօն վարած, յետոյ Թէքլիմարտի Առաջնորդութիւն ըրած, կրօնական ժողովոյ մէջ քանիցս աթոռ ունեցած, և ի վերջոյ եկեղեցական երեսփոխանաց շարքին մէջ գտնուած է:

Գաղցր և աղու բնաւորութեան տէր՝ ըլլալով՝ շատերուն սիրելի եղած էր, և իբրեւ ճշմարիտ հայր հասարակաց՝ ամեն անգի կը յարգէին ու կը մեծարէին զինքը:

Ի ժամանակին յիշատակեցինք Արշալուսոյ մէջ՝ Պիրմանի Թագաւորին պաշտօնատար մեծարդոյ խաչատրեան աղա Մինասին՝ ճանապարհորդութիւնն ի Ս. Էջմիածին, ուր իզմիրէն անցնելով գնաց ըստ հրամանի յիշեալ վեհապետին:

Թէքլիմարտի Մեղու՝ Հայաստանի լրագրոյն փետրվարի 22 թուոյն մէջ՝ այս ճանապարհորդութեան նպատակին և Պիրմանի Հայ բնակչաց վրայօք հետեւեալ տեղեկութիւնքն հրատարակեալ են:

Նորերումս մենք բարեպաշտ միջոց ունեցանք տեսնելու Բիրմանիայի կայսեր պալատական մեծ. Պ. Մինաս աղա խաչատրեանի հետ:

Բիրմանիայի Արեւելեան Հնդկաստանի նշանաւոր քաղաքներէն մին է, ուր միլիոն կուսպաշտ բնակիչներով, Այդ կուսպաշտ երկրում ևս Հայերը հարիւր տարուց աւելի է, որ բուն են գրեւ: Ներկայումս Բիրմանիայի մայրաքաղաքում՝ Մանրէլյում եթանաւոր հոգի հայ կան, որոնք մեծ յանձնարարութեամբ պարապում են վաճառականութեամբ և պալատի մէջ նշանաւոր պաշտօններ ունին: Այժմեան կայսեր պալատի ժամանակ՝ Գրիգոր աղա անուամբ հայազգի պարոնը Բիրմանիայի չորս մեծ եպարքոսներից մինն է եղած և այնքան մտերիմ կայսեր հետ, որ նո-

երեք կամ չորս եթանակք, մինչ գայր Գրիգոր ձեռնադրուէր և երկայր իւր վիճակն աշուհեաւ ընդ անցանել աղակալի աւուրց հանդիսից և տօնախմբութեանց՝ կը հասնէր ժամանակ անդորր դիւանագիտական կոնգրակագրութեց, և Ներսէս վարդապետն, որոյ նրբանկատ յառաջատեսութեամբ որքան յաճախէր թիւ արագագիւրջ պարզագործ դպրաց ընդօրինակողաց՝ ի գեղջէն Աշտարակայ, այնքան անգիւտ էին շեղել ի գիւղականտան Հայրապետանոյնն ոչ միայն շարագործք և յորինողք, այլև խոյառանհետացել էին մտաւորութեամբ հասկացողք և քաջավարժ ընթերցողք ձեռագրաց. միմիայն շարագործ կոնգրակաց, ընթերցող ամենակերպ նամակաց և յորինող պատասխանագրութեանց էր անձանձիր ամենաբաւականն Ներսէս վարդապետն, յորոց ձեռին արագագիւրջ գլխին և պարզագիւրջ ընդօրինակիչքն էին մեքենաշարք պաճու ճանապարհ, յորոց միշտ աշաւուրջքն և սրամիտքն ընդ գանազան պատրուակօք կեղանէին իւրանէն: Բայց Ներսէսին քաջ յայանի էր՝ որ Գրիգոր իսկ և իսկ ընդ դենքն զալ ոտն ի սեւամ գրան էլ միածնի, ասկեկան այնպէս պիտի աքացեր նրան, որ օղապարիկի նման վեհարանի կտուրէն կամ յԱշտարակ թաղէր, կամ ի բիւրական շունչ առնող, և միւս անգամ ի սրահ էլ միածնի ընդ ծակ բանալեաց անգամ չյաջողէր ակն արկանել և մինչ հարկ ստիպէր նման հեռանալ ի սրբոյ Աթոռոյն, բնակիչք չըմակալից յուշ բերեալ այն ամենայն՝ որ ինչ կրեալ էին յաւուրս յաջողութեանց նորա, Բեթէլի քրմորդեացն ման պիտի ծաղրածանակհալածէին:

Ներսէս լսել էր Գրիգորի գեղեցիկ դիտակի հետ բարձրահասակ չքնադիրան վայելուչ տես-

րին Մեծութեան եղբայր էր կոչուում: Պակաս հուշակամ չէ և Սարգիս աղան, որ Անգլիայի արշաւանքից աղաւել է Բիրմանիան մեծ գումար վատնելով իւր անձնական սեփականութիւնից:

Ընդհանրապէս Հայերը, թէև շատ փոքրութիւ, սակայն մեծ պատիւ և վարկ ունին Բիրմանիայում: Հայոց քրիստոնէական հաւատն անգամ չէ արգելք այս հանգամանքին, այլ ընդհակառակն՝ ինչպէս որ մեծ յարգ են վայելում կուսպաշտ քուրմերը, նոյն յարգն և պատիւն վայելում են և Հայոց եկեղեցականներն, ինչպէս նաև ամեն քրիստոնէից եկեղեցական պաշտօնեաները, մանաւանդ կուսակրօն հոգևորական դասը, որովհետև իւրեանց քուրմերն ևս կուսակրօն են:

Չնայելով որ Բիրմանիայի ժողովուրդը հաստատ է իւր կրօնին, այնու ամենայնիւ Անգլիական միսսիօնարները կարողանում են տարածել քրիստոնէութիւն նոցա մէջ:

Հայերը չունին միսսիօնարներ, բայց և այնպէս ցայժմ մօտ քսան հոգի Բիրմանացիներից ընդունել են հայոց դաւանութիւն, ուսել են հայոց լեզուն և գրագիտութիւնը: Հայերը այս տեղ պահպանել են անարատութեամբ իրանց լեզուն ու կրօնը:

Մի այդպիսի երկրում հայոց եկեղեցականը մեծ գործ կարող էր կատարել: Բայց ցաւօք պէտք է ասենք, որ Մանրէլյի հայոց եկեղեցւոյ քահանան ինքն անգրագէտ անձն է և բաց ի այն, որ գործ կատարելու չնորհ չունի, այլ և գործին փասել կարող է անգամ իւր տգիտութեամբ: Մեր հոգևոր իշխանութիւնը պէտք է մեծ ուշք դարձնէ այս հանգամանքի վերայ:

Արդարև, Անգլիացիք սիրելի չեն Բիրմանիայում, որովհետև նոցանից վախենում են Բիրմանացիք, մի գուցէ ժամանակին տիրապետեն նոքա իւրեանց բոլորքերին, ինչպէս որ մի փոքր ժամանակ առաջ տիրապետեցին ծովեզերայ մասին երկու միլիոն բնակիչներով (Մայրաքաղաք և Արական):

Հայերը կարողացել են դաւել Բիրմանիայի համակրութիւնը և հայերից վախենալու տեղիք չունեն նոքա. ուրեմն մեծ ապարդէ կայ Հայերի առաջ և մեծ պարտք հայ հոգևոր իշխանութեան վերայ հոգալու՝ կուսպաշտ ժողովուրդը լուսաւորելու քրիստոնէական կենդանարար լուսով:

Եւան համառն, որ մանկացեալ Յովսէփի ոմն էր, առանց ունելոյ նորա դիւցազնական վեհանձնութիւնքն և ազգայէն առաքինութիւնքն, և հասու էր որ Գրիգոր ոչ թէ միայն պիտի թող չտայր ինքեան Ներսէս վարդապետին՝ մտանել ի մէջ իւր և Յովսէփի, և ժամանակաւ դառնալ միջնորդն ի մէջ Ռուսաստանեայց վիճակաւոր Առաջնորդի և ընդհանրական կաթողիկոսի, այլ առաջին իսկ նուազին՝ երբ տեսնէր Ներսէս վարդապետն յատենի Յովսէփայ, ի թիթել աւկան պիտի Ամբակումոյ նման բուռն հարկանէր զգագաթման նորա մարտախառն, և զընկենոյր պատուհանէն քառասունեկին կանգուն հեռաւորութեամբ, և Յովսէփ պիտի չգտնէր իւր անձին մէջ այնքան հոգեկան արիւթիւն և անցողգողգ բնաւորութիւն, որ դէթ հեղ Յիսուսի նման ասէր, թայլ տուր մանկաւոյդ գալ առ իս և մի արգելք գրոտա:

Ներսէս վարդապետն լաւ գիտէր՝ որ միայն Յովսէփայ հետ հաշտութիւնն, և միայն Յովսէփայ չնորհած ներողութիւնն չ'արժէր ինչ, անշուշտ հարկաւոր էր Գրիգորի հաշտութիւնն, Գրիգորի ներողամտութիւնն: Տեսնեալ Գրիգոր գիտէր, կը հասկանայր թէ ինչ է հաշտութիւնն, ինչ է ներողամտութիւնն, ինչ է կարող նոցա միտքան լինելն օգուտ բերել ազգին, ինչ կը նշանակէ ի սէր ազգին անձնական անարգ կրկց զոհ բերելն՝ կամ այսպիսի զոհ ցայն օր ինքն Ներսէս վարդապետն ունէր գրած ի սեղան տառագիրտ հայութեան:

Տեսնեալ թէ Գրիգոր յօժար էր Ներսիսի հետ հաշտել: Գիշուք թէ Գրիգոր ընդ երկար գեղեցիկ չէր յեջմիածին, զինի ամուսնալի ժամանակի պիտի երթայր Ռուսաստան մտանել ի

Հաղորդելով այս տեղեկութիւնները Բիրմանիայի Հայերի մասին, որ մենք լսեցինք մեծ. Պ. Մինաս աղայից, դառնանք այժմ պարոնի ճանապարհորդութեան նպատակին:

Բիրմանիայի կայսրը վարուց անտի փախաբու էր բարեկամական յարաբերութիւնք սկսել վեհափառ կաթողիկոսի հետ: Այս նպատակով քանիցս անգամ Նորին Մեծութիւնը առանձին յանձնարարական նամակներ է տուած Հայ անցուորական քահանաներին՝ Նորին վեհափառութեան հասցնելու համար, բայց ոչ մինը նոցանից չէ կատարել իւր յանձնարարութիւնը: Նամակները տեղ չեն հասել՝ և ճանապարհածախքը, որ առատաձեռնութեամբ տուել է նոցա կայսրը, ապարդիւն են անցել:

Վերջապէս Նորին Մեծութիւնն որոշել է ողորկել իւր պալատական մեծա. Պ. Մինաս աղային առ վեհափառ կաթողիկոսն առանձին նամակով:

Նամակի պարունակութիւնը, ինչպէս նաև կայսեր դիտաւորութիւնը՝ Նորին վեհափառութեան հետ բարեկամանալու վերաբերմամբ, մեղ անցաւ են: Այսքան կարող ենք ասել, որ կայսրը խեղճում է նշանակել Բիրմանիայի մաներէն, կարողանայ միջնորդութիւն կայսեր և վեհափառի յարաբերութեանց:

Վարդապետի ճանապարհածախքը, ունիլը, նորա նպատակը, բոլորը յանձն է առնում կայսրը: Բացի այս՝ նա խոստանում է մի գումար տալ հայոց ճեմարան հիմնելու համար:

Մեծա. Պ. Մինաս աղան արդէն եղել է Ս. Էջմիածնում: Նորին վեհափառութիւնը սիրով ընդունել է մեծապարոնին և համակրութեամբ կարգացել կայսեր նստակը:

Վարդապետ նշանակելու մասին վեհափառ կաթողիկոսը խոստացել է կարևոր կարգադրութիւնք անել և արդէն պատուիրել է Պաշտօնու վեհափառ Սրբազան Գրիգոր եպիսկոպոսին, որ այցելէ Մանրէլյի հայերին և տեսակցելի Նորին Մեծութեան հետ:

Մեզ մնում է յուսալ, որ Նորին վեհափառութիւնը կ'նշանակէ արդարև մի բանիւրն վարդապետ, որ արժանապէս կը վարէ իւր պաշտօնը և կ'կարողանայ դաւել Հայերի, Բիրմանիայի կայսեր և ժողովրդի համակրութիւնը:

Փառս իւր, ուր որքան սիրեալ և պատուեալ էր Յովսէփ, նոյնպիսի սիրով և մեծարանք գրգուռեալ էր և Գրիգոր: Բայց միթէ չդիտէր Գրիգոր՝ որ երբ Ներսէս վարդապետն մնայ Յովսէփայ մօտ, կաթողիկոսն ըստ ամենայն մասանց նա կը լինի, և ոչ Յովսէփ. ուրեմն նորա առաջնորդութիւնն մէկ վաղանցուկ երազ պիտի լինի, որոյ մէջ որքան աւելի երկարատե մնայ, այնքան աւելի արհաւիրք դարձուրեալ պիտի գար ի, և որքան աւելի ջանահար լինի վաղապիկ օթափել, այնքան աւելի թաւի պիտի լինի նոքա չընթացաւ միջնորդութիւն Ներսէս վարդապետին թանաքի կաթիլներէն:

Գիտէր Ներսէս վարդապետն՝ որ այս ամենայն որդէս հայերոց մէջ յառաջագոյն տեսանելով Յովսէփայ դպրոցի մէջ դաստիարակեալ, և միայն արտաքին փառքիւնն ըստանձնեալ, իսկ ներքին ձիւքն ըստ կարի անտես արարեալ Գրիգոր վարդապետն՝ անձնապէս լինելոյ զգուշութեամբ պիտի ամենայն ճիգն թափէ և թող չտայ որ Յովսէփ Ներսիսի հետ միաւորվի: Ինչ խղճմանք էր՝ Գրիգոր վարդապետի խղճմանքը, որ այն ծերացեալ առիւծին, իւր Արարչին, իւր յոյն Ստեղծողին՝ Յովսէփին, որ արդէն չնորհօք գործունէութեան իւր իսկ Գրիգորի էր բխեալ, նորա աշաւուրջ զարհայցութեան բոլորածինն՝ իւր Գրիգորի նորա ակնոց և դիտակ սատարելոյն պատճառաւ՝ անձկացել, այժմ՝ մտադիր է միայնակ թողուլ այն միաբանութեան մէջ՝ որ չնորհօք Ներսիսի գլխահացել է, և միայն անձնական կրկ թափոյն մասն լինելով՝ անընդմիջ անձնասիրութեան շրջած հաստատուել է ի կամս, և ցնդաբանել իսկ պարծելով՝ հեռացնել նորամէն զՆերսէս վարդա-

